




Ռեպրեսիվ Էպիզոդ և
«Ռեպրեսիան որպես
հիվանդություն» երեխաների
մոտ

Ընդհանուր դրույթներ

- Երեխաների մոտ դեպրեսիայի գոյությունը բավական երկար ժամանակ հերքվում էր :
- Բժիշկները փնտրում էին երեխաների մոտ այնպիսի ախտանիշներ, որոնք հանդիպում էին մեծահասակների մոտ և չգտնելով հերքում էին այդ հիվանդության գոյությունը:
- Ներկայումս երեխաների մոտ դեպրեսիվ էպիզոդի կամ դեպրեսիայի առաջացման հնարավորությունը ապացուցված է:

Ընդհանուր դրույթներ

- Հետազայում «թաքնված դեպրեսիա», «դեպրեսիվ համարժեք/էկվիվալենտ» և «դեպրեսիան, որպես նորմալ զարգացման փուլ» հասկացությունները հանգեցրին նրան, որ այս ախտորոշմը սկսեցին չարաշահել:
- Եթե երեխան տառապում է դեպրեսիայով, արդյո՞ք պարտադիր է, որ նա լինի դեպրեսիվ չափահաս տարիքում:



Որո՞նք են դեպրեսիայի առանձնահատկությունները երեխաների մոտ

- Արդյո՞ք դեպրեսիան ունի առանձնահատկություն երեխաների մոտ:
- Արդյո՞ք դեպրեսիայի դրսևորումը անփոփոխ է ողջ կյանքի ընթացքում:
- Գոյություն ունի որոշակի անհաճայնություն դեպրեսիվ էպիզոդի վերաբերյալ:
- Տարաձայնություններ կան նաև «դեպրեսիվ հիվանդության» և «երկրեւո խանգարման» վերաբերյալ երեխաների մոտ:



Դեպրեսիվ էպիզոդ 5-12 տարեկան երեխայի մոտ

- Սովորաբար կարող է լինել կորստի կամ վշտի փորձառությունից հետո (բաժանում, մահ):
- Այնպիսի իրադարձությունից հետո, որը կարող է մեծահասկներին բավականին աննշան թվալ (տեղափոխում, ընտանի կենդանու մահ, ընկերոջ տեղափոխում):
- Հիվանդությունը զարգանում է աստիճանաբար, սակայն երեխայի վարքագիծը նախկինի համեմատ զգալիորեն փոփոխվում է:
- Նկատվում է
 - հոգեշարժողական արգելակում կամ գրգռվածություն,
 - մեկուսացում,
 - որոշակի իներտություն:

Դեպրեսիվ էպիզոդ 5-12 տարեկան երեխայի մոտ

Խորհրդատվության դիմելու պատճառներից են՝

- Քնի խանգարումներ /դիմադրություն քնելուն, անքնություն, մղձավանջներ/:
- Որովայնի ցավեր, գլխացավեր կամ այլ ցավեր:
- Մահվան կամ ինքնասպանության մասին մտքեր:
- Մննդի խանգարումներ, անորեքսիա փոքր երեխաների մոտ և բուլիմիա՝ նախադեռահասների և դեռահասների մոտ:
- Տարբեր բնույթի վախեր, հատկապես ծնողների հետ դժբախտ պատահարների վախը:
- Մտածողության, ուշադրության կենտրոնացման հետ կապված դժվարություններ, որոնք հանգեցնում են առաջադիմության իջեցմանը:



Դեպրեսիվ էպիզոդ 5-12 տարեկան երեխայի մոտ

- Հետաքրքրությունների բացակայությունը արտահայտվում է ժամանցի դադարեցմամբ (երեխային ոչինչ չի հետաքրքրում):
- Երբեմն ուղղակիորեն է արտահայտվում՝ «ձանձրացել եմ», «հոգնել եմ»:
- Ինքնագնահատականի իջեցումը արտահայտվում է հետևյալ արտահայտություններով՝ «Ես ոչ մի բանի պիտանի չեմ»:
- Արժեզրկումն՝ «Զգիտեմ, չի ստացվի», «Ծնողներս ինձ չեն սիրում»:




Վայնբերգի կողմից բացահայտված դեպրեսիայի տասը ախտանիշ

- դիսֆորիկ տրամադրություն
- ինքնամեղադրանք
- ագրեսիվ վարք (գրգռվածություն)
- քնի խանգարումներ
- դալրոցում առաջադիմության փոփոխություն/իջեցում
- սոցիալականացման մակարդակի նվազում
- դալրոցի նկատմամբ վերաբերմունքի փոփոխություն
- սոմատիկ գանգատներ
- էներգիայի նվազում
- ախորժակի անսովոր փոփոխություններ և/կամ քաշի կորուստ

Դեպրեսիվ էպիզոդ 5-12 տարեկան երեխայի մոտ

- Թվարկված դրսևորումների համակցումը (5-6), ժամանակի ընթացքում դրանց կայունությունը և երեխայի վարքագծի ակնհայտ փոփոխությունները բնորոշ են դեպրեսիվ էպիզոդին:
- Հաճախ ախտանշանները լիովին անտեսվում են (կամ հերքվում) շրջապատի կողմից, => անցում դեպի քրոնիկ վիճակ:





Դեպրեսիան որպես հիվանդություն

- Ախտանիշներն ավելի սակավ են կամ անորոշ, ավելի երկարատև են, անտեսված են, հիմնականում ծնողների կողմից:
- Կենտրոնական տեղ են զբաղեցնում այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են գրգռվածությունը, անկայունությունը և դյուրագրգռությունը:
- Դեպրեսիայի հետ մեկտեղ լինում են վարքային խանգարումներ, տագնապային խանգարումներ և ADHD:

Դեպրեսիան որպես հիվանդություն


- Երկարատև դեպրեսիայի հիմնական «բարդությունը»՝
- սովորելուց հրաժարվելն է,
- անտարբերությունը ուսման նկատմամբ,
- ֆոբիկ վարքագիծ, հատկապես դպրոցական ֆոբիա,





Դեպրեսիան որպես հիվանդություն

- մարմնի կամ արտաքին տեսքի նկատմամբ ամփույթ և անտարբեր վերաբերմունք,
- անձնական իրերի կորուստ (հագուստ, բանալիներ, խաղալիքներ),
- կրկնվող վնասվածքներ,
- վտանգավոր վարքագիծ,
- անդադար կռիվներ դպրոցում,
- կրկնվող ինքնավնասումներ,
- սուիցիդալ վարք:



Անակլիտիկ դեպրեսիա

Որոշակի հանգամանքներում նույնիկ
նորածինները կարող են տառապել
դեպրեսիայով:

«Անակլիտիկ» տերմինը նշանակում է
«հարակից»:

Մա արտահայտում է նորածնի կախվածությունը
մորից/ նրան կերակրողից:

Առաջացմանը նպաստում են հատկապես
անբարենպաստ, ողբերգական հանգամանքներ:

Անակլիտիկ դեպրեսիա


- Spitz և Bowlby մոդելներ (անբավարար/վատ խնամք):
- Նորածնի մոտ անակլիտիկ դեպրեսիան դա դրական հույզերից և զգացմունքներից մասնակիորեն զրկված լինելու հետևանք է:
- Հոսպիտալիզմը՝ դրական հույզերից և զգացմունքներից լիովին զրկված լինելու հետևանք է:





Անակլիտիկ դեպրեսիա

- Շափհը դիտարկել է անակլիտիկ դեպրեսիայի զարգացումը նորածինների մոտ, ովքեր իրենց կյանքի առաջին վեց ամիսների ընթացքում լավ հարաբերություններ են ունեցել մոր հետ, իսկ հետո նրանց բաժանել են իրարից:
- Բաժանումից հետո մանկիկները անդադար լացել են, հետո դադարել են հետաքրքրվել շուրջը կատարվող երևույթներով և դառել են տխուր և խոնարհ:
- Առաջացել է անքնություն, քաշի կորուստ, դիմադրողականությունը ընկել է, հաճախակի են հիվանդացել:
- 3-5 ամսից հետո դարձել են ավելի հանգիստ, դադարել են լացելուց և «քարացել են»:
- Որբանոցում հայտնված 90 երեխաներից, որոնց Շափհը դիտարկել է, 34-ը մահացել են կյանքի առաջին տարում:



Անակլիտիկ դեպրեսիա


- Դասական անակլիտիկ դեպրեսիայի համար նախապայման է այն փաստը, որ երեխան իր կյանքի առաջին վեց ամիսներն անցկացնում է սիրող մոր հետ:
- Եթե անակլիտային դեպրեսիայով տառապող երեխային 3-5 ամիս հետո, ոչ ավել, վերադարձնեն մոր մոտ, նրանք կառողջանան:
- Եթե մորից բաժանումը տևում է հինգ ամսից ավելի, և այդ ընթացքում այլ հարաբերություններ չեն ձևավորվում (այսինքն, եթե ընդհանրապես չկա երեխային խնամող, ով կարող է նրան ջերմություն և ապահովություն հաղորդել), ապա երեխան հետընթաց զարգացում է ապրում:
- Երեխան նորմալ չի զարգանում ոչ ֆիզիկապես, ոչ մտավոր և ոչ էլ հոգեպես և նույնիսկ կարող է մահանալ:

Հետճննդաբերական
դեպրեսիա



Հետծննդաբերական դեպրեսիա

- Հետծննդաբերական դեպրեսիայի ախտանշանները պետք է սկսվեն ծննդաբերությունից հետո երկու ամսվա ընթացքում:
- Կարող են պահպանվել շաբաթներ կամ ամիսներ, իսկ ավելի ծանր դեպքերում՝ տարիներ:
- Գոյություն ունի տարբերություն հետծննդաբերական դեպրեսիայի և այսպես կոչված «հետծննդաբեչական տխրության» միջև (Baby Blues):
- Վերջինիս հիմնական ախտանշաններն են՝ տխրությունն և աֆեկտների անկայունությունը:
- Որպես կանոն դրանք ի հայտ են գալիս ծննդաբերությունից հետո երկրորդ օրը և հինգերորդ օրը անհետանում են:
- Մայրերի մոտ 50%-ը ծննդաբերությունից հետո տառապում է Baby Blues ով :



Ռիսկի գործոններ

Դեպրեսիվ կամ տագնապային խանգարումներ անցյալում

Հղիության ընթացքում անհանգստություն կամ դեպրեսիա

Անչափահաս մայր


Սոցիալական և էմոցիոնալ աջակցության բացակայություն

Անհաշտ զույգ/զուգընկերոջ բացակայություն

Բարդ հարաբերություններ սեփական ծնողների հետ

Սթրեսային գործոն անցյալում

Հարազատի մահ



Ռիսկի գործոններ

Ֆինանսական խնդիրներ,

Գործազրկություն,

Արտագաղթ,

Աշխատանքի փոփոխություն,

Բռնություն,

Օրենքի հետ կապված խնդիրներ,

Թմրանյութեր, ակոհոլ...

Էդինբուրգյան հետժննդաբերական
դեպրեսիայի գնահատման սանդղակը (EPSD)
լայնորեն է օգտագործվում:

Դա 10 կետից բաղկացած սանդղակ է:

Առաջին անգամ այն ներմուծել է շոտլանդացի
հոգեբույժ Ջ.Կոխը:

Սանդղակի զգայունությունը կազմում է 86%:

Հետժննդաբերական
դեպրեսիա



Բուժում

- Մեծահասակների բուժման ուսումնասիրություններից ստացված էմպիրիկ տվյալները պարտադիր կերպով կիրառելի չեն երեխաների և դեռահասների համար:
- Սերոտոնինի հետզավթման ինհիբիտորները համարվում են արդյունավետ:

Բուժում


- Ցանկալի ազդեցություն չունեն Եռցիկիկ հակադեպրեսանտները, (հիմնականում լինում են հակաքոլիներգիկ կողմնակի ազդեցություններ, կարդիոտոքսիկություն)
- Չափազանց ռիսկային են այս տարիքային խմբում օգտագործելու համար ՄԱՕ ինհիբիտորները, (հիպերտոնիկ կրիզի բարձր ռիսկ)

Բուժում

Դեղամիջոցի անբավարար չափաբաժինը կամ բուժման կարճ տևողությունը կլինիկական պրակտիկայում ամենատարածված սխալն է:



Թեև միշտ անհրաժեշտ է սկսել ցածր դոզաներից, ընդունված դեղամիջոցի քանակը պետք է աստիճանաբար ավելացվի, մինչև ախտանիշները անհետանան կամ կողմնակի ազդեցությունները չհայտնվեն՝ հաշվի առնելով, որ կարող են լինել լայն անհատական տատանումներ:



Բուժում

Հետազոտությունները հաստատում են հոգեթերապիայի տարբեր տեսակների արդյունավետությունը

- Հոգեդինամիկ հոգեթերապիա
- Կոգնիտիվ-վարքային հոգեթերապիա
- Միջանձնային հոգեթերապիա
- Խմբային հոգեթերապիա